

Արձանագրություն N 4

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

14.04.2022թ.
Ժամը 17:45

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

Հանձնաժողովի քարտուղար՝

Բացակայում էր՝

Հանձնաժողովի անդամ՝

Ա. Միրզոյան

Ռ. Եղիազարյան

Ար. Գրիգորյան

Գ. Գևորգյան

Ն. Հարությունյան

Դ. Շատվերյան

1. ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում բողոքներ քննող անձի կողմից 05.04.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/24 որոշման կատարման վերաբերյալ տեղեկատվություն

(Ա. Միրզոյան)

1.1 ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/9 ծածկագրով ՀՀ Սյունիքի մարզի «Գորիսի պրոֆեսոր Խ. Երիցյանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովը բազմակողմանիորեն և հանգամանալից ուսումնասիրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 05.04.2022 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/24 (հրապարակված 07.04.2022թ.) որոշումը և հանգել հետևյալին.

ա) հանձնաժողովը գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը գնահատելիս առաջնորդվել է բացառապես ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ և բոլոր գործողությունները իրականացրել է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում,

բ) գնահատումը իրակացվել է առավելագույնս անաչառ և բոլոր հայտերը գնահատվել են մասնագիտական ու միանման մոտեցմամբ: Գնահատվել են բացառապես ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը հրավերի պահանջներին,

գ) կազմված արձանագրություններում նշված անհամապատասխանությունները նկարագրվել են հնարավորինս պարզ, հանգամանալից և հասկանալի:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 05.04.2022 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/24 որոշման կատարման գործողություններն իրականացնելիս գնահատող հանձնաժողովի կողմից՝ **մերժման հիմքերի միանման լինելու դեպքում մասնակիցների նկատմամբ միատեսակ մոտեցում ցուցաբերելու սկզբունքով առաջնորդվելիս**, դիտարկվել են «Վարարակն» ՓԲԸ-ի և «Բուիլդեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը և գնման ընթացակարգի ամբողջ ընթացքում ներկայացված փաստաթղթերը ու դրանցում առկա տեղեկատվությունը, քանի որ նշված երկու ընկերությունների հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությամբ մերժվել էին /գնահատվել էին հրավերի պահանջներին ոչ բավարար/ **միանման փաստական հանգամանքներից ելնելով** և հրավերով սահմանված Հավելված N1.2-ով պահանջվող՝ նույն 22-24 և 63-րդ տողերով պահանջվող սարք-սարքավորումների մասով

մասնակիցների կողմից ներկայացված առաջարկի անհամապատասխանության հիմքով՝ ընդ որում երկու մասնակիցներն էլ ներկայացրել էին ամբողջությամբ նույն և միանման առաջարկություն:

Ընդ որում հատկանշական է նշել, որ.

- Գնահատող հանձնաժողովի արդեն իսկ կայացրած որոշումներից մեջբերումներ, որոնք առնչվում են սույն ընթացակարգի շրջանակներում կայացրած ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 05.04.2022 թվականի թիվ ԳԲԲԱ-ՆԳ-2022/24 որոշմանը

22.02.2022 թվականի Արձանագրություն 2-2-ից /22-24 և 63-րդ տողերի մասով/

«Վարարակն» ՓԲԸ և «Բուխլեր» ՍՊԸ

Հավելված N1.2-ի մասով

ա) 1-88 /որի մեջ ներառված են նաև 22-24 և 63-րդ տողերը/ տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրերը, որոնք պարտադիր են լրացման համար, որպես հրավերի Հավելված N1.2-ով պահանջվող տեղեկատվություն՝ ընդ որում մասնակիցը պետք է լրացնի իր կողմից “Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը”, այլ ոչ թե նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված և պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրերը արտատալի նշված սյունակում /ինչպես նշել է իր բողոքում բողոքաբերը/: Գնահատող հանձնաժողովի 22.02.2022 թվականի N2-2 արձանագրությամբ՝ Հավելված N1.2-ի 22-24 տողերի մասով որևէ այլ անհամապատասխանություն չի հայտնաբերվել և չի արձանագրվել, քանի որ երկու մասնակիցներն էլ հիմնական հայտի՝ Հավելված N1.2-ի 22-24 տողերի մասով ներկայացրել էին “Джилекс Циркуль” արտադրողի “32/80” մոդելը, որի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը այն գնահատել էր հրավերով պահանջվող՝ 22-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, G=2.6խմ/ժ, H=3.0մ”, 23-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, G=2.3խմ/ժ, H=3.0մ” և 24-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, G=2.0խմ/ժ, H=3.0մ”, սարքավորումներին և սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխան: Գնահատող հանձնաժողովը գնահատելիս հիմք է ընդունել այն նույն փաստաթղթերը /սարքավորման տեխնիկական անձնագրեր/, որոնք հայտնաբերվել էին համացանցում, որոնք բողոքաբերը ներկայացրել է բողոքի քննության ընթացքում, որպես հիմնավորող փաստաթուղթ: Այսինքն գնահատող հանձնաժողովը նշված սարքավորումների մասով որևէ անհամապատասխանություն չի արձանագրել իր 22.02.2022 թվականի N2-2 արձանագրությամբ և ընդամենը նույն արձանագրության՝ նշված մասնակիցների անհամապատասխանությունների բաժնի “ա” ենթակետով նշել է, որ անհրաժեշտ է լրացնել իրենց իսկ կողմից ներկայացված /առաջարկվող/ սարքավորման տեխնիկական բնութագրերը: Նշված հանգամանքը որևէ տարակարծության տեղիք չի տալիս, սակայն երկու մասնակիցներն էլ շտկման շրջանակում՝ անհասկանալի պատճառներով, ներկայացված նոր Հավելված 1.2 փաստաթուղթ, 22-24-րդ տողերի համար նախկինում ներկայացված սարքավորումների փոխարինվել են այլ սարքավորումներում /նշված փաստի մասին նշում է նաև Բողոքաբերը/ ներկայացրել են նոր առաջարկ, նույն “Джилекс Циркуль” արտադրողի “32/40” մոդելը, իսկ “Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը” սյունակում լրացվել է նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված և պահանջվող սարքավորման տեխնիկական բնութագրերը: Կրկին արձանագրում ենք, որ նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը բացակայում էր և արձանագրությամբ չի պահանջվել: Արդյունքում գնահատող հանձնաժողովը, բնականաբար, գնահատել է մասնակիցների կողմից ներկայացված նոր առաջարկները, ինչի արդյունքում արձանագրել է, որ 22-24-րդ տողերի համար ներկայացված սարքավորում /“Джилекс Циркуль” արտադրողի “32/40” մոդելը/ չի համապատասխանում հրավերի պահանջներին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ գնահատող հանձնաժողովի 22.02.2022 թվականի N2-2 արձանագրության մեջ նշված է

“Ծանոթություն”, որով հանձնաժողովը՝ մասնակիցների համար առավել հասկանալի և մատչելի դարձնելու նպատակով, նշել է

- **Հրավերով պահանջվող բոլոր տեսակ օդափոխության սարքավորումների՝ օդաքարշերի և օդամղիչների համար մասնակիցների կողմից ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին, գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում է այդ մոդելների անձնագրային տվյալներում առկա աէրոդինամիկ կորերի միջոցով՝ համաձայն որոց վերջիններս համար հրավերով պահանջվող օդաքանակի արտադրողականության դեպքում <Q=---խմ/ժ> պետք է ապահովեն պանանջվող ճնշում <P=---Պա>:**

- **Հրավերով պահանջվող տարբեր տեսակի պոմպերի համար մասնակիցների կողմից ներկայացված մոդելների համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում է այդ մոդելների անձնագրային տվյալներում առկա հիդրավլիկ կորերի միջոցով, համաձայն որոնց վերջիններս հրավերով պահանջվող ճնշման դեպքում <H=---մ բարձրության պարամետր> պետք է ապահովեն պահանջվող ջրաքանակ <Q=---խմ/ժ կամ լ/վրկ>:**


Նշված “Ծանոթություն”-ը ոչ թե գնահատող հանձնաժողովի մոտեցում է արձանագրում, այլ հանդիսանում է նմանատիպ սարքավորումների, նախագծող ինժեներների կողմից հաշվարկված և նախագծային փաստաթղթերով սահմանված հզորությունների, որոնք յուրաքանչյուր նմանատիպ սարքավորման համար սահմանված են հրավերի Հավելված N1.2-ով, արձանագրում: Այսինքն մասնակիցների համար առավել քան հասկանալի և մատչելի ձևով բացատրվում է նմանատիպ սարքավորումների ընտրության սկզբունքը, որով վերջիններս պետք է առաջնորդվեն այս կամ այն սարքավորման ընտրելիս: Նշված ձևով գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բոլոր նպանատիպ սարքավորումները և դրա արդյունքում է անհամապատասխանությունը նշված երկու մասնակիցների մոտ հայտնաբերվել միայն 22-24 տողերի համար:

գ) **63-րդ տողով ներկայացված արտադրողի մոտ նշված մոդելը չի գտնվել /անհրաժեշտ է ներկայացնել հիմնավորող փաստաթղթերկամ համապատասխանեցնել հրավերի պահանջներին/:** Մասնակիցները Հավելված N1.2-ի “Արտադրող ընկերության անվանումը” սյունակում նշել են “BOLID” անվանումը, իսկ “Մոդել” սյունակում “DTM 1207” անվանումը և գնահատող հանձնաժողովը ուսումնասիրության արդյունքում “BOLID” արտադրողի մոտ նման՝ “DTM 1207” մակնշմամբ մոդել չի հայտնաբերել, ինչը և արձանագրել է: Այսինքն արձանագրվել է, որ “BOLID” արտադրողը՝ նման “DTM 1207” մոդելի արտադրանք չունի և դրա արդյունքում մասնակիցներին առաջարկվել է կամ ներկայացնել ներկայացված տեղեկատվությունը հավաստող փաստաթուղթ կամ առաջարկը համապատասխանեցնել հրավերի պահանջներին: Նշված կետի մասով՝ շտկումներ կատարելու շրջանակում, մասնակիցների կողմից ուղարկված փաստաթղթերում լրացվել է ընդամենը “Առաջարկվող սարքավորման անձնագրային տեխնիկական բնութագիրը” սյունակը՝ ընդ որում այնտեղ լրացվել է իրենց կողմից առաջարկվող մոդելի նույն “DTM 1207” անվանումը և արձանագրված անհամապատասխանության մասով որևէ հիմնավորող փաստաթուղթ չի ներկայացվել և այդ սարքի մասով որևէ փոփոխություն նույնպես չի ներկայացվել, ինչի արդյունքում էլ նշված տողի մասով գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ մասնակիցների կողմից 22.02.2022 թվականի N2-2 արձանագրությամբ նշված անհամապատասխանությունը չի շտկվել:

Եզրահանգումներ

Ի կատարումն 05.04.2022 թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/24 որոշման՝ գնահատող հանձնաժողովը լրացուցիչ ուսումնասիրեց «Վարարակն» ՓԲԸ-ի կողմից սույն բողոքի շրջանակներում ներկայացված փաստաթղթերը /“Джилекс Циркуль” արտադրողի/ նշված պոմպային սարքավորումների տեխնիկական անձնագիրը, ինչի արդյունքում փաստում է, որ ի սկզբանե մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման ժամանակ /հիմնական հայտեր, շտկված հայտեր/, թե 22.02.2022 թվականի N2-2 և 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությունները կազմելիս, նշված սարքավորումների /22-24 տողերով ներկայացված/ գնահատման ժամանակ հիմք է ընդունվել համացանցից գտնված նույն տեխնիկական անձնագիրը, որը և ներկայացվել է բողոքաբերի կողմից: Մասնավորապես.

Շտկված Հավելված N1.2-ում նշված՝ “Джилекс Циркуль” արտադրողի “32/40” մոդելի տեխնիկական բնութագրերը՝ համաձայն ներկայացված և գնահատման ժամանակ գտնված տեխնիկական բնութագրերի հետևյալն են.



Սույն գրաֆիկի Ձախ կորում ներկայացված է “Джилекс Циркуль” արտադրողի “32/40” մոդելի պոմպի աշխատանքի կորը՝ համաձայն որի Հրավերի Հավելված N1.2-ի 22-24 տողերով պահանջվող


22-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, $G=2.6$ խմ/ժ, $H=3.0$ մ”

23-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, $G=2.3$ խմ/ժ, $H=3.0$ մ”

24-րդ տողում նշված -“Շրջանառու պոմպ, $G=2.0$ խմ/ժ, $H=3.0$ մ”

պոմպերի համար սահմանված է $H=3.0$ մ բնութագիր, իսկ այդ պահանջվող բնութագրի դեպքում առաջարկվող “Джилекс Циркуль” արտադրողի “32/40 մոդելի դեպքում, տվյալ սարքավորման արտադրողականությունը /ջրաքանակ -խմ/ժ չափման միավորով/ կազմում է 20լ/րոպե կամ 20լ/րոպե X 60 րոպե=1200լ/րոպե կամ 1.2 խմ/ժ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Այսինքն 22-24 տողերի համար $H=3.0$ մ բնութագրի դեպքում՝ համապատասխանաբար 2.6, 2.3 և 2.0 խմ/ժ ջրաքանակ արտադրողականության փոխարեն “Джилекс Циркуль” արտադրողի “32/40 մոդելը ապահովում է 1.2 խմ/ժ ջրաքանակ հզորություն:

1.4 Графики расходно-напорных характеристик.



Ներկայացված գրաֆիկում պարզ երևում է վերոնշյալ անհամապատասխանությունը:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը կրկին անգամ արձանագրում է, որ «Վարարակն» ՓԲԸ-ի և «Բուիլդեր» ՍՊԸ-ի կողմից Հավելված N1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացրած «Джилекс Циркуль» արտադրողի «32/40 մոդելի տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով սահմանված սարքավորումների տեխնիկական բնութագրերին՝ այն ունի էապես ավելի քիչ ջրաքանակի արտադրողականություն: Անհամապատասխանությունը առավել քան հասկանալի Ձևով ներկայացված է վերը նշված համապատասխան գրաֆիկերի ու դրա վերլուծության տեսքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հավելված N1.2-ի 22-24-րդ տողերով «Վարարակն» ՓԲԸ-ի և «Բուիլդեր» ՍՊԸ-ի հայտերը վերոգրյալ հիմնավորմամբ ենթակա է մերժման՝ ուստի գնահատող հանձնաժողովը նպատակահարմար չի գտնում 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրությամբ նույն մասնակիցների կողմից ներկայացված Հավելված N1.2-ի 63-րդ տողի համար մասնակիցներից պահանջել շտկում՝ առավել մասնրամասն նշելով արձանագրված անհամապատասխանության բնույթը՝ չնայած նրան, որ հանձնաժողովի գնահատմամբ 22.02.2022 թվականի N2-2 և 11.03.2022 թվականի թիվ 2-4 արձանագրություններում արդեն իսկ հնարավորինս մանրամասն ներկայացվել է արձանագրված անհամապատասխանության բնույթը, քանի որ անգամ 63-րդ տողի հնարավոր շտկման պարագայում երկու մասնակիցների հայտերը ենթակա են մերժման Հավելված N1.2-ի 22-24-րդ տողերով ներկայացված սարքավորումների անհամապատասխանության հիմքով:

2. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Միրզայան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետով ներկայացված հիմնավորումները, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել <<Վանի>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Միրզոյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

Անդամ՝

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Միրզոյան

Ռ. Եղիազարյան

Ար. Գրիգորյան

Գ. Գևորգյան

Ն. Հարությունյան